



## Կոնտակտային կենտրոնի մասնագետ

### ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

- բարձրագույն կրթություն,
- առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ բանկում՝ որպես հեռախոսային կենտրոնի մասնագետ,
- MS Office, էլեկտրոնային հաղորդակցման միջոցների՝ Skype, Viber, WhatsApp ծրագրերի տիրապետում,
- հաղորդակցման գերազանց հմտություններ, գրագետ խոսք,
- հոգատար վերաբերմունք հաճախորդների նկատմամբ,
- արագ սովորելու ցանկություն և ունակություն,
- հաճախորդների ներգրավման և վաճառքների իրականացման հմտություններ,
- բանակցությունների վարման և կոնֆլիկտների կառավարման հմտություններ,
- արագ կողմնորոշվելու ունակություն,
- նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում,
- հայերենի, ռուսերենի և անգլերենի գերազանց իմացություն:

### ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- հեռախոսազանգերի ընդունում, հաճախորդներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում,
- հեռախոսազանգերի և էլեկտրոնային հաղորդակցման այլ միջոցներով հաճախորդների կարիքների բացահայտում, խորհրդատվություն և վաճառք,
- հաճախորդներից ստացված հաղորդագրությունների ստուգում, մշակում և կատարում,

- տվյալների մուտքագրում, հաշվետվությունների պատրաստում և ներկայացում:

## **ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ՝**

Ներկայացնել ինքնակենսագրություն (CV) հայերենով կամ անգլերենով [cv@evocabank.am](mailto:cv@evocabank.am) էլեկտրոնային հասցեին՝ վերնագրում նշելով **«Կոնտակտային կենտրոնի մասնագետ»:**

Հարցազրույցի կիրավիրվեն միայն նախնական ընտրությունն անցած անձինք:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՆԱԺԱՄԿԵՏ՝** 10.03.21

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝** 5.04.21

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝** Գլխամասային գրասենյակ

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ՝** 5 աշխատանքային օր՝ ներառյալ շաբաթ-կիրակի՝  
ժ.12:00- 21:00